

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐԱՐՁԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱՐԵՇՐՋԱԿԱՆ
(ԷՎՈԼՈՒՑԻՈՆ) ՎԱՐԻԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Ասում եմ՝

Մարդը կապկից է սերել:

Ասում եմ սակայն՝

Կապիկների մէջ ձախիկներ չկան,

Իսկ ռուսերի՞ց եմ ձախիկ-ձախերն այս:

Ումի՞ց եմ սերել...

Պ. Սեւակ

Տիեզերքի բիրիւական պատկերացումը բուրնովին այլ է, քան այսօրուան քննադատական հետազոտութիւնների վրայ հիմնուածը: Սրա պատճառն այն է, որ Ս. Գրիի միակ մտահոգութիւնը եղել է կրօնական ճշմարտութիւնների հաղորդումն ու ուսուցումը, ուր Աստուած յայտնում է ինքն իրեն՝ խօսքերի եւ գործերի միջոցով: Այդ յայտնութեամ լրումն ու գագաթնակէտը հանդիսանում է Յիսուս Քրիստոսի աշխարհ գալը: Մինչդեռ քննադատութիւնը կամ կենսաբանութիւնը զբաղւում են իրերի եւ կեանքի վերաբերեալ այնպիսի երեւոյթներով, որոնք կապ ունեն դրանց ծագման եւ զարգացման ընթացքի հետ:

Ս. Գրիքն ու գիտութիւնը իրար չեն կարող հակասել, եթէ դրանցից իւրաքանչիւրը մնայ իր ոլորտի կամ սահմանների մէջ. նոյնիսկ աւելին, երկուսն էլ կարող են ծառայել միեւնոյն նպատակին՝ ճանաչելու Աստծուն, որպէս արարիչ ողջ տիեզերքի եւ կեանքի, որովհետեւ «Երկինքը պատգամում է Աստծոյ փառքը, իսկ հաստատութիւնն էլ (այսինքն՝ երկնականաբար) պատմում է նրա ձեռաց գործերը: Օրը օրուան տալիս է պատգամը, եւ գիշերն էլ գիշերուան գիտութիւն է յայտնում: Գոյութիւն չունեն ոչ խօսքեր եւ ոչ էլ բաներ, դրանց ձայները չեն լսում: Այսուհանդերձ, նրանց պատգամը տարածւում է ողջ աշխարհով մէկ եւ նրանց խօսքերն էլ հասնում են մինչեւ երկրի ծագերը» (Սղմս. ԺԸ 2-5):

Քննադատութիւնը տիեզերքի կառոյցը նկատում է մի քանակ քարեշրջութեան (Էվոլուցիայի) արդիւնք եւ շնորհիւ ֆիզիկայի, աստղագիտութեան, կենսաբա-

նուրբան, մաթեմատիկայի եւ այլն, հիմնաւորում է իր տեսակետները: Բնագիտութիւնը կարիք չունի աստուածաբանութեան: Փոխադարձաբար, աստուածաբանութիւնն էլ կարիք չունի բնագիտական հետազոտութիւններին, որովհետեւ Աստուած բոլորովին վեր է դրանցից: Սակայն բացառուած կամ անտեղի չէ, որ բնագիտութիւնն էլ փորձի ունկնդրել տիեզերքի Արարչի պատգամը նրա արարչագործութեան միջոց:

Ի՞նչ է սակայն տարբերութիւնը սուրբգրային կաշուող տիեզերաբանութեան ու մարդաբանութեան՝ համդէպ էվոլուցիոն եղանակով ընկալուածի: -Աստուածաշնչի յատկապէս Ծննդոց գիրքը աստուածային ստեղծագործութիւնը ներկայացնում է որպէս իր լրումին հասած մի գոյավիճակ, որն իր մէջ պարփակում է նաեւ մարդուն՝ իր մարդկային կատարելութեամբ, մինչդեռ այսօրուան բնագիտութիւնն ու կենսաբանութիւնը տիեզերքն ու մարդը համարում են մի պատմական բարեշրջութեան (էվոլուցիայի) արդիւնք:

Այսպիսով, բարեշրջութիւնը (էվոլուցիան) մկատի ունի արդէն իսկ գոյութիւն ունեցող տեսակների յետնագոյն զարգացումը՝ շնորհիւ ժամանակի ընթացքում կատարուած որոշ յատկանիշների փոփոխման: Այս պարագան վերաբերում է նաեւ մարդուն, նրա արտաքին եւ ներքին բնագաւառներին:

Բարեշրջութիւնը մարդկային փորձառութեան վրայ հիմնուած (empirik) մի հասկացութիւն է, որ միշտ նախադրում է գոյութիւն ունեցող որեւէ նախանիւթ: Մինչդեռ աստուածաբանութեան մտահոգութիւնն է՝ բացատրել, թէ որտեղից է առաջացել այդ փոփոխւող կամ բարեշրջման ենթակայ նախանիւթը:

Փորձարարական եղանակով ուսումնասիրուած երեւոյթների մասին գոյութիւն ունեցող եզրայանգումները շատ անգամ յարաբերական բնոյթ ունեն, քանի որ միշտ իրրեւ ելակետ ունեն մարդու ենթակայական յարաբերութիւնը տիեզերքի, տարածութեան եւ ժամանակի հետ: Այս իսկ պատճառով գիտութիւնը երբեմն վերանայման է ենթարկում իր հաստատումները, ինչպէս, օրինակ, Իսահակ Նիւթոնի (1643 - 1727) հռչակաւոր յայտնաբերումը «ձգողութեան օրէնք»-ի մասին իր տեղը զիջեց Ալբերտ Այնշտայնի (1879 - 1955) «ձգողութեան» վերաբերեալ ունեցած տեսութեանը⁽¹⁾:

Համաձայն գիտական նոր վարկածների, այսօրուայ տեսանկի աշխարհը գոյացել է աւելի քան 10 միլիարդ տարիներ առաջ՝ ռադիօակտիւ հսկայ մի ատոմի (հիւլէի) պայթումից կամ դեռեւս չնշտուած հրաշէկ եւ թանձր մի զանգուածի տրոհումից: Ումանց համաձայն էլ՝ այն գոյացել է մէտտրոնների եւ պրոտոնների (եւեկտրական ուժի լիցքաւորումներ) միաւորումից, որի հետեւանքով էլ կազմուել է միւրք: Սակայն գիտնականները դեռեւս չեն

կարողացել հաստատել և սպառնիչ արտայայտություններ ունենալ տիեզերքի նախանիւթի կամ նախաէներգիայի մասին: Աստուածաբանությունը հաստատում է, թէ տիեզերքի նախանիւթը կամ նրանում գոյութիւն ունեցող օրինաչափութիւններն ու զարգացումները ստեղծուել են ուղղակի Աստծուց: Այս գիշարտութիւնը յայտնուել է նոյնիմէն Աստծու կողմից և այն միայն հաւատով ըմբռնելի է:

Էվոլուցիոն տեսակէտների ռահվիրայ է համարւում անգլիացի բնագէտ Չարլզ Ռոբերտ Դարվինը (1809 - 1882) , որը մի տեսակ շարունակողն ու խորացնողը եղաւ շվեդացի յայտնի բնագէտ Կարլ Լիննէուսի (1707 - 1778) գիտական աշխատանքի: (Լիննէուսը բուսաբանութեան և բնագիտութեան բնագաւառներում հանդիսացաւ առաջինը, որն իրեն յայտնի բոյսերն ու կենդանիները դասակարգեց ըստ խմբերի՝ նրանց միջեւ եղած մտամտութիւնների և տարբերութիւնների հիման վրայ): Իրականում, սակայն, իրերի և կեանքի նկատմամբ յայտնուող նման էվոլուցիոն տեսակէտներ գոյութիւն են ունեցել Դարվինից բազմաթիւ դարեր առաջ: Դեռեւս 6-րդ դարում (ն. թ.) չին փիլիսոփայ Կոնֆուցիոսը (551-479) ուսուցանում էր, թէ իրերը առաջացել են մի պարզ նախանիւթի աստիճանական զարգացումից և ճիւղաւորումից: Յոյն փիլիսոփայ Թալէսը (624-547 մ. թ.) ջուրը նկատում էր որպէս նախանիւթ, իսկ Էմպեդոկլէսը (483-423 մ. թ.) և ուրիշ յոյն մտածողներ բառեակ տարբեր՝ հողը, ջուրը, օդը և կրակը, ընդունում էին իրրեւ տիեզերքի բաղկացուցիչ նախանիւթեր: Հետագայում Դեմոկրիտը (460-370 մ. թ.), իւրացնելով իր ուսուցչի՝ Լեկիպիի տեսակէտները, մէջտեղ բերեց ատոմ-ի (հիւլէի) ուսմունքը, որով նկատի ունէր մատերիայի չբաժանող ամենափոքր մասնիկը՝ որպէս նախանիւթ բոլոր իրերի: Ատոմը նկատւում էր նաեւ անփոփոխելի կորիզ ունեցող մի մասնիկ: Սակայն այսօր գիտական փորձով յայտնի է, որ ատոմը կարելի է մասնատել ու նրանից էներգիա շահել, քանի որ այն էներգիայից է կազմուած: Հետեւաբար, ատոմը ենթակայ է լինում փոփոխման՝ վերածուելով լոյսի և ջերմութեան:

Վերոյիշեալների թւում պէտք է նկատի ունենալ նաեւ Արիստոտելին (384-322 մ. թ.) , որն յատկապէս իր «*Historia animalium*» գրքում մեզ ներկայացնում է կենսաբանական որոշ հետազօտութիւններ, որտեղ ընդունում է օրգանական կեանքի աստիճանական զարգացումը:

Մինչեւ վերածնունդ բնագիտութեան և կենսաբանութեան վրայ զգալի էր արիստոտելեան ազդեցութիւնը: Այնուհետեւ հանդէս են գալիս նոր մեթոդներով ու տեսութիւններով զինուած բնագէտները, ովքեր ձգտում են առար-

կայօրէն, առանց փիլիսոփայութեան մէջ խննդելու, կատարել իրենց հետազօտութիւնները: Դրանց մէջ ամենից աչքառումներն են վերելումն ու ճշմարտութիւնները (Լիմնէ) եւ փրանսիացի բնագէտ Ժան-Բատիստ Լամարկը (1744-1829): Մօտաւորապէս միեւնոյն ժամանակաշրջանում գործում են նաեւ հոչակաւոր բնափիլիսոփաներ՝ անգլիացի Ֆրանսիս Բեկոնը (1561-1626), փրանսիացի Ռեմէ Դեկարտը (1596-1650), գերմանացիներ Գոտֆրիդ Վիլհելմ Լայբնիցը (1646-1716 Վ. Բ.) եւ Իմանուէլ Կանտը (1724-1804): Սրանց մեծագոյն գործը լինում է բաժանել «մեխանիզմ»-ը «վիտալիզմ»-ից, այսինքն՝ օրգանական աշխարհն ուսումնասիրելիս, նկատի ունենալ օրգանիզմը իրրեւ ղնմարկման առանձին բնագաւառ՝ առանց անդրադառնալու տուեալ օրգանիզմում գոյութիւն ունեցող «կեանքի սկզբունք»-ին, այսինքն՝ շնչին կամ հոգուն: Այս հետադարձաբար ուսումնասիրում է նաեւ մարդկային մարմինը, ինչ որ առիթ է տալիս էվոլուցիոն տեսակետների մի նոր զարգացման:

Այս բաւարից յետոյ, 1859 թ. լոյս է տեսնում Զարլզ Դարվինի հանրայայտ աշխատութիւնը՝ հետեւեալ վերնագրով. «Տեսականների ծագումը բնական ընտրութեան միջոցով, կամ բարենպաստող ցեղերի պահպանումը կեանքի համար մղող պայքարում», որտեղ շարադրուել էին նրա էվոլուցիոն տեսութիւնները⁽²⁾:

Դարվինի ուսմունքը՝ դարվինիզմը, ընդունում է, -ինչպէս նրա գրքի վերնագիրն է ծանուցում,- թէ բնական եւ կենդանական տեսակները առաջացել են բնական ընտրութեան կամ սերունդների գոյութեան պահպանման պայքարի միջոցով՝ յարմարուելով կենսալուրտի պայմաններին: Այսպիսով, այսօրուան մեզ յայտնի բոյսերն ու կենդանիները մի ուրիշ, արդէն իսկ անհետացած տեսակների պատմական զարգացման արդիւնք են: Այս բաւարի վրայ պէտք է աւելացնել նաեւ խաչասերումը, որով արհեստական ընտրութեամբ ձեռք են բերում բոյսերի ու կենդանիների նոր տեսակներ: Դարվինը իր այս տեսութիւնները մի անգամ եւս հաստատում է իր 1871 թ. լոյս ընծայած «Մարդու ծագումը» անունը կրող գրքում, տեսութիւններ, որոնք բախում են ժամանակակից կրօնափիլիսոփայական ըմբռնումների հետ:

Ըստ Դարվինի, մարդը տարբերութիւն չունի անասունից: Նա առաջացել է կապիկների սեռին պատկանող մի մախատիպար կենդանուց: Մարդու հոգեկան աշխարհն էլ բնագոյային զարգացման արդիւնք է, հետեւաբար կարելի չէ վստահել նրա քանականութեանը:

Այստեղ Դարվինն սկսում է ինքն իրեն հակասել: Նա ուզում է իր գիտութիւնից թօթափել այն, ինչ վերաբերում է հոգուն կամ Աստծուն,

սակայն այս մարգում չի կարողանում մարդոջութեամբ յաջողութիւն գտնել: Իր ինքնակենսագրութեան մէջ կարդում ենք. «Մի ուրիշ աղբիւր՝ Աստծոյ գոյութեան համոզումի վերաբերեալ, իմ վրայ թողնում է շատ մեծ արժէք ունեցող մի աղբիւրի տպաւորութիւն: Այս մէկը գալիս է այն բացառիկ դժուարութիւնից կամ աւելի անկարելիութիւնից ըմբռնելու, թէ այս հսկայ ու հրաշալի աշխարհը, -որն իր մէջ պարփակում է իր հեռաւոր անցեալն ու հեռաւոր ապագան տեսնելու ունակութեամբ օժտուած մարդուն,- արդիւնք է կոյր պատահականութեան կամ անհրաժեշտութեան: Երբ մտածում եմ այս մասին, ինքս ինձ պարտաւոր եմ զգում որոնելու մի առաջին սկզբնապատճառի, որով թէիստ կոչուելու արժանի եմ դառնում...: Բայց այնուհետեւ մէջս կասկածն արթնանում է. կարելի՞ է արդեօք վստահել նման հոյակապ եզրակացութիւններ կատարող մարդու հոգում, որ, -ինչպէս ես բոլորովին հաւատացած եմ,- զարգացել է մի այնպիսի ստորին հոգուց, որը յատուկ է անասուններին»⁽³⁾ :

Եթէ կասկածելի է մարդու հոգում վստահելը, ուրեմն կարելի չէ վստահել նաեւ այդ հոգու արտադրանքներից մէկը նկատուող դարվինիզմին, մասնաւորապէս որ դեռեւս մարդոջութեամբ չեն հաստատուած նրա տեսակէտները:

Ֆրիդրիխ էնգելսը (1820-1895) անդրադառնալով դարվինիզմին՝ գրում է Կարլ Մարքսին. «Ի դէպ, Դարվինը, որ ես հիմա կարդում եմ, մարդոջովին հոյակապ է: Աստուածաբանութիւնը մինչեւ վերջերս դեռ մարդոջութեամբ չէր խորտակուել, սակայն այդ բանն այժմ կատարուած է: Դրանից բացի, առ այսօր այսպիսի մի հրաշալի փորձ եւ այն էլ այսպիսի յաջողութեամբ չէր կատարուել՝ փաստելու համար բնութեան մէջ առկայ պատմական զարգացումը»⁽⁴⁾: Էնգելսը յանձնին Դարվինի ողջունում է աստուածաբանութեան խորտակչին եւ մատերիալիստական մարդաբանութեան ջատագովին: Սակայն էնգելսը չարաչար սխալուում էր. դարվինիզմը նպատակ չի ունեցել երբեք խորտակելու աստուածաբանութիւնը: Միւս կողմից էլ դարվինիզմի ծագումնաբանական տուեալները արողովին պէտք չէ հակադրել կրօնական տեսակէտներին: Ի վերջոյ կարելի է հարց տալ, թէ որտեղի՞ց են ծագում առել օրգանական աշխարհի պատկանող տեսակների մախնիները կամ նրանց հիմքում ընկնող բջիջները (գեները), ներառեալ խաչասերման անապարհով ստացուած նոր սորտերինը: Գիտութիւնը չի կարողանում մի յստակ պատասխան գտնել այս հարցին, մինչդեռ հաւատացեալն ընդունում է, որ ամէն ինչի սկիզբը հետեւանք է Աստծոյ արարչագործ գորութեան:

Էռնստ Հեկկելը (1834-1919), հետեւելով դարվինիստական գաղափարներին, մէջտեղ է բերում անօրգանական նիւթից կեանքի բնական ծագման գաղափարը եւ զարգացնում՝ մատերիալիստական մոնիզմը, որով ամեն ինչի որպէս հիմք կամ մախասկիզբ ընդունում է նիւթը (մատերիան) , որի մէջ միայն պէտք է փնտռել Աստծուն: Հեկկելի խօսքերով՝ «Աստծուն մեմ տեսնում ենք քարի, բոյսերի, կենդանիների եւ մարդկանց մէջ»⁽⁵⁾: Այսպիսով, էվոլուցիոն վարդապետութեան կողմնակիցների մօտ առաջանում են երկու տարբեր ուղղութիւններ՝ մէկը մատերիալիստական, իսկ միւսը իդիալիստական: Այս վերջինի գլխաւոր ներկայացուցիչն է հանդիսանում գերմանացի փիլիսոփայ Գեորգ Վիլհելմ Հեգելը (1770-1831) :

Յրանսիացի նշանաւոր երկրաբան, պալեօնթոլոգ եւ միաժամանակ ջիզվիտ հոգեւորական Պիէր Թէլլար դը Շարդէնը (1881-1955) փորձ է արել գիտական բարեշրջական տեսակետները հաշտեցնել աստուածաբանութեան հետ: Ըստ նրա՝ Քրիստոսի միջոցով իրականացուած աստուածային փրկագործութեան պատմութիւնը պէտք է դասաւորել բարեշրջութեան ընդհանուր համակարգի մէջ: Իսկ կեանքի բարեշրջութեան գագաթնակէտը պէտք է որոնել մարդու մէջ, որի գիտակցութիւնը ժամանակի ընթացքում իր զարգացումն է ունեցել, որի շնորհիւ նա կարողացել է ապրել ու գոյատեւել: Այսօր, սակայն, մարդիկ ապրում են՝ մտածելով նուաճել գիտակցութեան նոր հորիզոններ եւ ճանապարհ հարթել մի գերագոյն գիտակցութեան, որպէսզի կարողանան գերմարդ (surhomme) դառնալ: Այս գործընթացը ձգտում է մարդկանց միջեւ հաւասարութիւն ստեղծել գիտական, տեխնիկական, ընկերային եւ մշակութային մակարդակների վրայ: Ամեն ինչ ենթակայ է ձեւափոխման (transformation) եւ ամեն ինչ պիտի հասնի մի օմեղայի, այսինքն՝ մի վերջին կէտի: Երբ այս մէկը կատարուի, ամեն ինչ պիտի մարմնաւորուի (inkarnation): Քրիստոսն ինքը մարմնաւորուեց եւ սկիզբ դրեց դէպի մարմնաւորում ձգտող բարեշրջութեան (էվոլուցիայի): Ամեն ինչի մարմնաւորումով պիտի կատարուի միութիւնը Աստծոյ հետ: Այս իմաստով Քրիստոսը, լինելով Աստուծոյ էվոլուցիան, պիտի լինի նաեւ գագաթնակէտը մարմնաւորուած տիեզերքի: Ինչպէս հացն ու գինին, որպէս մատերիա ձեւափոխում են ու դառնում մարմին եւ արիւն Քրիստոսի, այնպէս էլ ամեն ինչ պիտի ձգտի դէպի Քրիստոս, եւ ձեւափոխման այս գործընթացը,՝ համաձայն Շարդէնի,՝ պիտի լինի բնութեան ու կեանքի քրիստոսացումով, որովհետեւ նիւթը ինքն իր մէջ անկենդան չէ, ատումը վերածում է մոլեկուլի,

մոլեկիլը դառնում է մեզա-մոլեկիլ, եւ մեզա-մոլեկիլից առաջանում է միարջիջ կեանքը⁽⁶⁾:

Շարդէնի տեսակետները, իրենց դրական կողմերով հանդերձ, անհամա-տեղելի են քրիստոնէական եկեղեցու վարդապետութեան հետ: Նա իր հաստա-տումների մէջ երբեմն այն աստիճան ծայրայեղութեան է գնում, որ պատե-րազմները, վայրագութիւնները, Հերոշիմայի զոհերը եւ այլ աղետներ նկատում է քարեշրջութեան համար դրական եւ անխուսափելի երեւոյթներ, միմչդեռ դրանք անմերդաշնակութիւններ են Աստուծոյ բարի ստեղծագործութեան մէջ, որպէս արդիւնք մարդկանց պատուիրազանցութեան եւ չարի կործանարար գործունէութեան: Միւս կողմից էլ Քրիստոսի մարմնաւորումը չի կարելի երբեք նկատուել իբրեւ աստուածային էվոլուցիայի արդիւնք, այլ դա Աստուծոյ կողմից հաստատուած փրկագործութեան խորհրդի պատմական զարգացման եւ կատարելագործման միջոցն է: Իսկ ինչ վերաբերում է հացի եւ գինու միւթա-փոխութեան օրինակին, դրանք, համաձայն ուղղափառ եկեղեցու դաւանամքի, իրենց միւթական բնութիւնը չեն փոխում, այլ «իմամալի գօրութիւն» ընդու-նելով՝ դառնում Քրիստոսի մարմին եւ արիւն:

*

* *

Արդար կը լինի ընդունել այն, որ բնագիտական հետազոտութիւնները դրական երեւոյթ են հանդիսանում մայմիսկ կրօնական ասպարէզում, որով-հետեւ նրանցով մենք հմարաւորութիւնն ունենք առաւել խորը թափանցելու տիեզերքի եւ կեանքի հրաշալի երեւոյթների մէջ: Սկզբնական շրջանում քրիստոնէական կրօնը պայքարեց գիտական մեր տեսակետների դէմ, բանի որ նկատում էր, թէ յատկապէս քարեշրջական տեսութիւնները դարձել էին մատերիալիստական եւ ամաստուածեան գաղափարներով համակուած գիտա-կանների ու փիլիսոփաների մեծաշնորհը, մի բան, որ ակնյայտ էր հեկկէլեան ժամանակաշրջանում, երբ շատերի կողմից գիտական մեր տեսութիւնները ընկալուած էին իբրեւ կրօնը փոխարինող մեր վարդապետութիւն:

Պէտք է ասել, որ եկեղեցու աստուածաբանները շատ անգամ իրենց պայքարում ծայրայեղութեան գնացին, միմչեւ որ անդրադարձան այն իրա-կանութեան, թէ քարեշրջութեան հարցում գիտնականների հետ իրենց ունեցած

գլխաւոր տարբերութիւնը բուն հարցին մօտեցալու սկզբունքի մէջ էր. կրօնական-իդիալիստական, թէ՞ մատերիալիստական:

Ըստ քրիստոնէական Եկեղեցու դաւանանքի, ամէն ինչ ստեղծուած է Աստուծոց, որ ինքն իր մէջ ունի գոյութիւնների ամբննելի լիութիւնը: Սկզբնագոյ համարւող միւթը կամ քառսը, ինչպէս նաեւ տեսականների բոլոր նախագոյականներն ու կեանքը մոյնպէս Աստուծոց են, որովհետեւ այն ինչ որ կեանք ունի՝ մի ուրիշ կեանք ունեցողից է (*omne vivum e vivo*): «Ամէն ինչ, լինի դա մասնիկ կամ ամբողջութիւն, ինչպէս աշխարհն ու մարդկութիւնը, ամենից առաջ ստանում են Աստուծոց մի սաղմնային իւրայատկութիւն, որը հիմքն է տեսականների կատարեալ ինքնութեանը»⁽⁷⁾:

Ինչ վերաբերում է աստուածային արարչագործութեան եւ բարեշրջական վարդապետութեան իրար հաշտեցմանը, պէտք է ասել, որ աստուածաբանութիւնը ներկայումս ընդունում է մի յատուկ եւ չափաւոր տեսակետ այս առթիւ՝ հիմնուելով Ս. Գրքի տուեալների վրայ, որոնց համաձայն Աստուած ոչ թէ միանգամից, այլ ժամանակի հասկացութեան մէջ ստեղծում է տիեզերքը: Լոյսի ստեղծումով սկսւում է այդ ժամանակը, եւ մի՞թէ «եղիցի՛ լոյս» հրամանը եւ դրան յաջորդող զարմանահրաշ արդիւնքը՝ «եղեւ լոյս» չի՞ նմանում այն սկզբնական զանգուածային ատումի պայթումին, որի մասին խօսում են գիտնականները՝ նկատելով այն իրրեւ սկիզբ տիեզերքի առաջացման:

Աստուած ինքն ուղղակիօրէն չի ստեղծում կենդանիներն ու բոյսերը, այլ հրաման է տալիս երկրին մէջտեղ քերելու դրանք, իսկ մարդուն տալիս է իշխանութիւն՝ տիրապետելու բնութեան եւ կենդանական աշխարհի վրայ: Մարդը ոչ թէ մէկ օրից միւսը այդ իշխանութեան գլուխը պիտի անցնէր, այլ ժամանակի ընթացքում ամէն ինչ պիտի հնազանդեցնէր իրեն: Մարդը իր ծնուած օրից մինչեւ հասունութիւն բարեշրջութեան շարունակական գործընթացի մէջ է, նրան յաջորդող սերունդներն էլ այդ ընթացքի մէջ են, բոլորն էլ ձգտում են դէպի աւելին, բոլորն էլ ցանկանում են մի քայլ եւս առաջ գնալ իրենց տիրապետութեան մէջ: Եթէ մարդը կենդանիների կամ մարդակերպ կապիկի սեռին է պատկանել, ապա ուրեմն՝ ինչպէ՞ս եղաւ, որ ինքը միայն կարողացաւ առանձնաձայն այդ սեռից եւ մէջտեղ քերել մարդկային ցեղը: Պարզ է որ մարդուն մէջ կար կենդանիներից գատորոշուելու ունակութիւնը: Իսկ եթէ մատերիալիստական բարեշրջութեան տեսակետի համաձայն՝ դարերի ընթացքում միւս կենդանիներն էլ պիտի ունենան իրենց զարգացման գործընթացը, մորից սակայն կապիկը կապիկ պիտի մնայ, իսկ մարդը՝ մարդ, քանի որ այս

վերջինս էլ իր քարեշրջութեամբ միշտ պահելու է իր դեկավարողի դիրքը՝ քաղդաստմամբ միւս կենդանիների: Սա նշանակում է, որ մարդը հենց սկզբից ստեղծուել էր իր տեսակի համաձայն իրրեւ մարդկային յատկանիշներով օժտուած էակ: Նա մարմնապէս կապուած է մատերիային ու կենդանիներին, սակայն, ի տարբերութիւն նրանց, նա քանական էակ է եւ ունի իր հոգեկան աշխարհը, հենց այստեղ է կայանում նրա առաւելութիւնը հանդէպ այս աշխարհի միւս ստեղծուածների, քանի որ Աստուած ուղղակի իր կողմից կենդանութեան շունչ է փչել նրա մարմնին:

Որպէս եզրակացութիւն պէտք է ասել, որ քրիստոնէական եկեղեցին ընդունում մի չափաւոր քարեշրջութիւն ստեղծագործութեան մէջ: Այսուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ զուր եմ թափուած այն բոլոր ջանքերը՝ ապացուցելու համար Ս. Գրքում հանդէս եկող ստեղծագործութեան քարեշրջական բնոյթը: Ո՛չ, գիտական առումով Ս. Գրքում գոյութիւն չունի քարեշրջութիւն: Սակայն այս չի նշանակում, թէ գիտական աշխարհը պէտք է արհամարհի Ս. Գրքի տուեալները ստեղծագործութեան վերաբերեալ, զարգացած մտքին ներքի չէ նման մակերեսային մի եզրայնագում: Միայն թէ այստեղ նկատի պէտք է ունենալ հետեւեալը. քնազիտութեան եւ աստուածաբանութեան ունեցած մտահոգութիւններն ու հետապնդած նպատակները տարբեր են, սակայն ոչ անպայման իրար հակադրուող: Առաջինը զբաղւում է տիեզերքի օրինաչափութիւններով, իսկ երկրորդը՝ Աստծոյ՝ տիեզերքի հետ ունեցած ծրագրով:

1. տե՛ս Hermann Bondi, "El Cosmos", Bs. As., 1962, էջ 14 :

2. Rene F. de La Huerta, "¿ A Imagen y Semejanza de Quién?", Santander (España), 1961, էջ 5:

3. Francis Darwin, "Charls Darwin", Übersetzt von J. Victor, Stuttgart, 1893, էջ 83:

4. Karl Marx - Friedrich Engels, "Briefwechsel", 1854-60, II, Stuttgart, 1902, էջ 548 :

5. Rudolf Steiner, "Haeckel, die Welträtsel und die Theosophie", Dornach (Schweiz), 1926, էջ 33 :

6. Rudolf Liebig, "Die andere Offenbarung", Augsburg, 1966, էջ 73-75 : Նաեւ՝ Ernst Benz, "Schöpfungsglaube und Endzeiterwartung", München, 1965, էջ 224-260:

Theilhard de Chardin, "Auswahl aus dem Werk", Freiburg i. Br., 1964 :

7. M. Schmaus, "Kath. Dogmatik", I, München, 1960, էջ 557 :

ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԸԼԸՆՃՅԱՆ